

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ  
ԴՊՐՈՑՈՒՄ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.81

**Ամփոփում**

Հայերենի բարբառները բազմաթիվ են, բավական գեղեցիկ և հարուստ, «կենդանի լեզվի» ուրույն դրսևորումներն են: Սույն հոդվածում բարբառների ուսուցմանը անդրադարձել ենք և՛ հիմնական, և՛ ավագ դպրոցում: Բարբառային իրողությունների ուսուցման համար առաջարկում ենք որոշ մեթոդական հնարներ, նաև մեթոդներ: Բարբառների ուսուցման համար հիմնական դպրոցի հայոց լեզվի պետական ծրագրում ժամաքանակ հատկացված չէ, սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ հիմնական դպրոցի «Գրականություն» առարկայի պետական ծրագրում ներառված են տարբեր բարբառներով գրված գեղարվեստական ստեղծագործություններ, ապա բնականաբար պետք է անդրադառնանք այդ երկերի լեզվական իրողությունների ուսուցմանը: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ հիմնական դպրոցում նպատակահարմար ենք գտել բարբառային իրողությունների ուսուցումը կազմակերպել՝ գործածելով **1. խորհրդավորություն, 2. գուշակություն, 3. զարմանք, անսպասելիություն** հնարները, որոնք հիմք են տալիս սովորողների մեջ հետաքրքրություն առաջացնելու ուսուցանվող նյութի նկատմամբ: Ավագ դպրոցում առավել ուշադրություն ենք դարձնում գիտելիքահեն իրողություններին՝ անդրադառնալով գրական հայերեն-բարբառ-ժարգոն հասկացություններին: Առաջարկում ենք ինքնուրույն հետազոտությունների նյութեր, պաստառների, գովազդների պատրաստում, տեսահոլովակների նկարահանում:

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Բարբառ, խորհրդավորություն-գուշակություն-զարմանք, անսպասելիություն, գրական հայերեն, ժարգոն, կենդանի լեզու, բարբառների դասակարգման բազմահատկանիշ սկզբունք, բանահավաքություն:

**Ներածություն**

Բարբառային մի շարք իրողությունների ուսուցումը կարևոր է և անհրաժեշտ՝ պայմանավորված նախ այդ երկերի լեզուն հասկանալու նախապայմանով, նաև բարբառները արժևորելու, լեզվական այդ

մշակույթը պահպանելու, սովորողներին այն փոխանցելու համար: Բարբառով են գրված էպոսը, բազմաթիվ ժողովրդական հեքիաթներ, խաղիկներ, գեղարվեստական երկեր: Բարբառով են ստեղծագործել Խ. Աբովյանը, Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Գ. Սունդուկյանը, Սայաթ-Նովան: Հ. Թումանյանը «Կենդանի լեզուն», այսինքն հայ մարդու մտածողությունը վերարտադրում էր բարբառով: Չէ՞ որ արտաքին կամ ներքին խոսքը բանալին է մարդու մտածողության: Մայրենի լեզվի ուսուցումը չի սկսվում այբուբենից կամ քերականական իրողություններից, ինչպես ցանկացած օտար լեզվի ուսուցում: Մայրենի լեզուն մտածողության և խոսքի կապն է (9): Բարբառախոս միջավայրում երեխան մտածում և խոսում է բարբառով, նրանով գրված գեղարվեստական երկերը ավելի կենդանի են պարունակում սոցիալական կարևոր իրողությունների մոդելներ, ինչպիսիք են ընտանիքի, պետականության, թագավորության և այլ իրողություններ, օրինակ՝ «Սասնա ծռեր» էպոսը: Ումբերտո Էկոն մեծ տեղ էր հատկացնում տեքստի հաղորդակցական կողմին: Գրողը հաղորդակցական գործառույթը կարող էր ստեղծել որոշ կոդերով, «սև արկղերով» (8), ինչպես նաև լեզվական առանձնահատկություններով, բարբառներով: Սասունի բերդը, այնտեղ ապրող ժողովրդի կենցաղը, հոգեբանական առանձնահատկությունները մեզ հաղորդվում են սասունի բարբառի միջոցով, Մեծ Մհերը, Սասունցի Դավիթը հզոր թագավորներ են, սասունցի, Սասունի բարբառով մտածող և խոսող անհատներ: Այդ պատճառով էլ բարբառային մի շարք իրողությունների ուսուցումը կարևոր է և անհրաժեշտ՝ պայմանավորված նախ այդ երկերի լեզուն հասկանալու նախապայմանով, նաև բարբառները արժևորելու, լեզվական այդ մշակույթը պահպանելու, սովորողներին այն փոխանցելու համար:

### **Մեթոդաբանությունը**

Կիրառել ենք համեմատական, վերլուծական, զուգադրական մեթոդներ, ինչպես նաև բարբառների ուսումնասիրումը կատարել ենք փոխներգործուն մեթոդներով:

### **Քննարկում**

ՀՀ պետական կրթական ծրագրերում լեզվաբանության բաժիններից բարբառագիտությանն անդրադառնում են 11-րդ դասարանում (10): Հիմնական դպրոցում բարբառագիտության ուսուցմանը հատուկ ժամաքանակ հատկացված չէ, սակայն անդրադարձ այդ իրողություններին պարտադիր կատարվում է բարբառով գրված գեղարվեստական երկերը ուսումնասիրելիս: Բարբառների լեզվական իրողությունների ուսուցումը կարելի է կատարել տարբեր տեսանկյուններից: Նախ «Գրականություն» առարկայի շրջանակներում կատարվում է բարբառով գրված գրական երկերի ուսուցումը, ինչպիսիք են «Սասունցի Դավիթ» էպոսը, Սայաթ-

Նովայի խաղերը, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից հատվածներ, Գ. Սունդուկյանի «Պեպո» երկը և այլն: Մյուս կողմից, մասնավորապես անդրադառնալով բարբառներին՝ իբրև լեզվի հարստություն, կարելի է հանձնարարել արտադասարանային աշխատանքներ, ինքնուրույն հետազոտություններ, ինչպես օրինակ՝ բարբառախոսներից հավաքագրել հեքիաթներ, առակներ, ասացվածքներ, խաղիկներ: Այս հանձնարարականները նպատակահարմար են հատկապես բարբառախոս միջավայրում, իսկ ոչ բարբառախոս միջավայրում սովորողների համար կարելի է կազմակերպել էքսկուրսիաներ, որի ընթացքում կարող են հանդիպել բարբառախոսների և լսել ու գրել հետաքրքիր պատմություններ: Հետո այդ գրի առած նյութերից կարող են պատրաստել հետաքրքիր պատմություններ, բեմադրել և նկարահանել տեսահոլովակներ, բեմադրել փոքրիկ ներկայացումներ: Այս աշխատանքները սովորողների մեջ առաջացնում են հետաքրքրություն բարբառների նկատմամբ, զարգացնում են ստեղծագործական կարողություններ:

Ավագ դպրոցի 11-րդ դասարանի «Հայոց լեզու» դասընթացում անդրադարձ կա գրական լեզու-բարբառ հասկացություններին (7): Բարբառագիտության ընդհանուր հիմունքների մասին ավագ դպրոցում կարելի է տալ նաև գիտական տեղեկություններ: Եթե հիմնական դպրոցում ուշադրություն ենք դարձնում մասնավորապես բարբառով զրկված երկերի լեզվի յուրացմանը, ապա ավագ դպրոցում հնարավորություն ունենք նաև գիտական տեղեկություններ տալու սովորողներին: Մենք առաջարկում ենք հակիրճ դասախոսություն (5-7 բույս) բարբառագիտության մասին: Դասախոսության ընթացքում կարելի է ցուցադրել սահիկաշարեր, օգտագործել գրատախտակը՝ որոշ գծապատկերներ կազմելու համար:

Առաջարկում ենք դասախոսության նմուշօրինակ.

«Բարբառագիտությունը մշակել է իր յուրահատուկ մեթոդը՝ լեզվաբանական աշխարհագրությունը (1): Լեզվաբանական աշխարհագրության նպատակն է որոշել բարբառային երևույթների աշխարհագրական ընդգրկումը, ինչպես նաև ժամանակային սահմանների որոշում (2): Լեզվաբանական աշխարհագրությունն իր ուսումնասիրությունները կառուցում է բարբառագիտական ատլասների վրա, որոնց մեջ մտնող քարտեզները ներկայացնում են բառային, հնչյունական ու քերականական կարևոր հատկանիշները, որոնցով իրարից տարբերվում են տվյալ լեզվի բարբառները: Ա. Այտընյանն առանձնացնում է բարբառների չորս խմբեր՝ միջին գավառական, Կոստանդնուպոլիս-Փոքր Ասիա, արևմտյան, արևելյան: Ք. Պատկանյանը կատարում է հայ բարբառների դասակարգման նոր փորձ: Նա առաջարկում է հայերենի բարբառները բաժանել երկու խմբի՝ արևելյան և արևմտյան: Երկու խմբի

տարբերակիչ՝ հատկանիշներ են համարվում ներգոյական հոլովի կազմությունը՝ 1. -ում, -ըմ,-ամ, 2. սեռականով և մեջ կապով: Ք. Պատկանյանը անդրադառնում է նաև հնչյունական տեղաշարժերին (2): Հայ բարբառագիտության զարգացման մեջ առաջին գիտական դասակարգումը կատարում է Հր. Աճառյանը «Հայ բարբառագիտություն (Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (Մոսկվա, Նոր Նախիջևան, 1911) աշխատության մեջ, ուր առաջին անգամ կատարվում է հայ բարբառների դասակարգում՝ հենված լեզվական մի էական հատկանիշի՝ սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ բայաձևերի կազմության սկզբունքի վրա: Դա ձևաբանական միահատկանիշ առաջին դասակարգումն էր (3): 20-րդ դ. կեսերին Ա. Ղարիբյանը կատարեց նաև հայ բարբառների հնչյունաբանական դասակարգում: Բարբառի տարբերակիչ հատկանիշների մեջ նա առաջարկեց վերցնել խոսվածքի և՛ ձևաբանական, և՛ հնչյունաբանական երևույթները: Ա. Ղարիբյանը օրինակ է բերում Քանաքեռի խոսվածքը, որը պատկանում է Արարատյան բարբառին, ձայնեղները խլացնում է, մյուս բոլոր հնչյուններով հարազատ է մնում Արարատյան բարբառին (4): «...Ոտ ու գլուխ փետացրած՝ ճամփից խոկում, սար ու չոլ **բցում**, խեղդում կամ քարեքար տալիս» (ՎՀ): Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ առաջ է քաշում բարբառների զուգաբանական-վիճակագրական սկզբունքի կիրառմամբ բարբառների դասակարգման բազմահատկանիշ սկզբունքը: Այսինքն համակողմանի ուսումնասիրվում են բարբառների լեզվական մակարդակների տարբեր նիշեր (5): Ինչպես նշում է Գ. Ջահուկյան, հայոց լեզուն բարբառային մեծ տարբերություններ ունեցող լեզուներից մեկն է: Բարբառների ուսումնասիրության պատմությունը ընդգրկում է բավական երկար ժամանակահատված: Իհարկե, կատարվել են բավական կարևոր ուսումնասիրություններ, սակայն այն առ այսօր լեզվաբանների ուշադրության կենտրոնում է և, իհարկե, այժմ էլ կատարվում են հետաքրքիր ուսումնասիրություններ» (6):

Վերլուծենք դասախոսությունը. այստեղ հիշվում են մի շարք լեզվաբաններ, որոնց մի մասի կյանքի և գիտական գործունեության մասին հիշատակվում է նաև հայոց լեզվի դասագրքում: Մյուս կողմից՝ ավագ դպրոցում դասախոսությունը ընդունելի է, քանի որ սովորողը ծանոթանում է գիտական ոճին, նրա առանձնահատկություններին նաև այս եղանակով: Դասախոսության ընթացքում գործածվող սահիկաշարերը, զննական պարագաները նյութը ավելի մատչելի են դարձնում:

Ավագ դպրոցում բարբառների ուսուցման համար մենք առաջարկեցինք **դասախոսության, խմբավորում, ինքնուրույն հետազոտություններ**. վերջիններս բավական կարևորեցինք, որովհետև

ինքնություն հետազոտությունները զարգացնելով կարող ենք վերածել նախագծերի: Դասախոսությունից հետո կարելի է առաջարկել խմբային աշխատանքներ: Օրինակ՝ դասարանը բաժանել երեք խմբի: Հանձնարարել ստեղծագործական շարադրություն «Իմ քաղաքը», «Իմ գյուղը» թեմաներով: Առաջին խումբը կներկայացնի գրական հայերենով, երկրորդ խումբը՝ բարբառով, երրորդ խումբը՝ ժարգոնով: Իբրև ամփոփում սովորողները կարժևորեն գրական լեզու-բարբառ-ժարգոն՝ համեմատելով լեզվի երեք իրացումները խոսքում: Մեր կատարած փորձարարական հետազոտության ընթացքում (Երևանի համար 119 դպրոցի 11-րդ դասարան, պատմական հոսք) արժևորվեցին մասնավորապես բարբառով գրված աշխատանքը, ապա գրական հայերենը, որը համարվեց բարձր-գրքային ոճ, ժարգոնը կիրառում են, բայց չեն խրախուսում: Հիմնական դպրոցում բարբառային տարրերը ուսուցվում են հիմնականում համակցված դասերի ընթացքում, այն է՝ «Գրականություն» դասի ընթացքում լեզվական իրողությունների մանրամասն քննություն՝ ստեղծելով միջառարկայան կապեր՝ գրականություն-հայոց լեզու, մասնավորապես՝ ձևաբանություն, շարահյուսություն, բառագիտություն, հնչյունաբանություն: «Գրականություն» առարկայի շրջանակում բարբառով գրված երկերի ուսուցման ընթացքում (Գ. Սունդուկյան «Պեպո», Սայաթ-Նովայի խաղերը, Խ. Աբովյան «Վերք Հայաստանի»), եթե բարբառային տարրերին չանդրադառնանք, ապա ուսուցանվող նյութը անհասկանալի կմնա սովորողին: Հետաքրքիր առանձնահատկություն էլ կա. այս երկերը ուսումնասիրվում են հիմնական դպրոցի տարբեր դասարաններում: Սովորողների մտքում տպավորվում են որոշ բարբառային իրողություններ, ընդ որում բառապաշարային առանձնահատկությունները հատկապես, որոնց շնորհիվ ավելի դյուրին է դառնում ընկալման գործընթացը: Բացի այդ, պետք է միշտ ուշադրություն դարձնել արժեքային համակարգի ձևավորմանը: Սովորողները ուսուցչի օգնությամբ պետք է կարողանան արժևորել բարբառները և նրանցով գրված երկերը: Մենք առաջարկում ենք որոշ մեթոդներ, որոնք նպաստել են բարբառով գրված երկերի ուսուցմանը, ինչպես նաև այդ երկերի լեզվական իրողությունների առանձնահատկությունների իմացությանը: Այսպես՝ հիմնական դպրոցի 9-րդ դասարանում «Գրականություն» առարկայի շրջանակում ուսումնասիրվում է Խ. Աբովյանի կյանքը, գիտական գործունեությունը, ինչպես նաև որոշ հատվածներ «Վերք Հայաստանի» վեպից: Բնագրային հատվածները սովորողները չեն կարող հասկանալ՝ առանց լեզվական մանրամասն վերլուծության: Պետք է սովորողները հստակ պատկերացնեն բարբառ-գրական լեզու-խոսակցական լեզու-ժարգոն սահմանազատումները: Իհարկե, այս իրողությունները պետք է ուսուցչի-սովորեցնողի կողմից

կատարվեն բավական հմտորեն, արժևորումները պետք է հիմնավորվեն, քանի որ մարդու խոսակցական շերտի ընտրությունը անհատական է և արտացոլում է իր մտածողությունը: Անդրադառնանք, օրինակ Խ. Աբովյանի հայտնի երկի լեզվական իրողությունների ուսուցմանը: Այստեղ մենք առաջարկում ենք դասը սկսելու մի քանի հնարներ և մեթոդներ: 9-րդ դասարանում հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ բարբառային առանձնահատկությունները ուսուցանելիս մեծ ուշադրություն ենք դարձնում՝ 1. **խորհրդավորություն**, 2. **գուշակություն**, 3. **գարմանք**, **անսպասելիություն** հնարներին (11): Դասի տեսակը ընտրում ենք համակցված: Դասը, առհասարակ, հաղորդակցություն է ուսուցչի և աշակերտների միջև: Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում են հաղորդակցության սկիզբն ու վերջը: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Վեպի վերնագիրը արդեն իսկ **խորհրդավոր** է՝ «Վերք Հայաստանի»: Այս բառակապակցությունը հատկացուցիչ-հատկացյալի կապակցություն է, ընդ որում հատկացյալը գործածված է հետադաս: Սովորողներին որպես հիշեցում կարող ենք հարցեր տալ հատկացուցիչ-հատկացյալ կապակցության շարադասության մասին: Հիշեցնել, որ հատկացուցիչը սովորաբար գործածվում է նախադաս, մինչդեռ այս կապակցության մեջ գործածված է հետադաս: Դասի **խորհրդավորությունը** դեռ բացահայտված չէ. ուսուցիչը սովորողներին հարցնում է. «Ես մտքումս բան եմ պահել, որը վերաբերում է մեր դասին: Դուք մտածեք հարցեր, ուղղեք ինձ, որպեսզի **գուշակեք** իմ մտքին»: Ուսուցիչը սովորողների հարցերին պատասխանում է «այո» կամ «ոչ»: Այդ հարցերը վերաբերում են «Հառաջաբանի» լեզվին, վեպի վերնագրին: Քանի որ սովորողները պետք է գուշակեն, թե ինչու Խ. Աբովյանը որոշեց ստեղծագործել Քանաքեռի բարբառով: **Գուշակությունները** «ճիշտ» ուղով տանելու համար սովորողներին կարելի բաժանել հուշող թղթեր և հանձնարարել կատարել խմբային աշխատանք: Դասարանը բաժանում ենք երկու խմբի՝ 1. բարբառով գրված նյութը հասկանալի է ժողովրդին, 2. բարբառով գրված նյութը գեղեցիկ է:

Սովորողներին հիշեցնում ենք բարբառով գրված այլ ստեղծագործություններ, որոնք իրենք ուսումնասիրել են, օրինակ՝ «Սասունցի Դավիթ» էպոսը, Սայաթ-Նովայի խաղերը, Գ. Մունդուկյանի «Պեպո» ստեղծագործությունը: Խմբերը սկսում են հիմնավորել իրենց պատասխանները: Խմբային աշխատանքը կարող է ունենալ թերություն: Խմբում ընդգրկված սովորողներից ոչ բոլորը կարող են ակտիվ մասնակցել, այդ պատճառով ուսուցիչը պետք է բոլորին զբաղեցնի:

Սովորողները փորձում են բարբառային բառեր, դարձվածքներ հիշել, ինչպես **ջավահիր, ճաթ, էրեխեք, ծոտի-մոտի, խունկ ու մոմ վառել, ծուն(դ)ր**

**դնել, հացը կտրել, հոգին մաշվել** և այլն: Այս բառերի, դարձվածքների մի մասը նրանց ծանոթ է Սայաթ-Նովայի խաղերից, մյուս մասը այսօր էլ գործածական է: Հիմնավորումները պետք է կատարեն աշակերտները ուսուցչի ուղղորդմամբ: Սովորողները, բնականաբար, այս փուլում եզրահանգում են. «Քանաքեռի բարբառը հասկանալի էր այդ ժամանակ հասարակ ժողովրդին, ուրեմն հետաքրքրությամբ կընթերցեն», «Բարբառով գրված ստեղծագործությունները մեր օրերում կարևոր են, քանի որ մեզ հաղորդակից են դարձնում մեր ժողովրդի լեզվամտածողությանը»:

Խ. Աբովյանի վեպում գործածված են մոտ 2000 դարձվածքներ: Դարձվածքները բավական տարածված են խոսակցական բառաշերտում: Ուսուցիչը այս փուլում կարող է սովորողներին բաժանել քարտեր, որտեղ գրված են դարձվածքներ՝ հարցադրումով՝ արդյոք ծանոթ են այդ դարձվածքները, և եթե ծանոթ են, հարցնել դարձվածքի իմաստը, տարբերակային ձևերը, որոնք մինչև օրս գործածվում են: Օրինակ՝ **«լազաթ տալ, լեզուն կարկամել, խավարը բռնել, ծուն(դ)ր դնել, կարգ դնել, կոփվ բաց անել, հացը կտրել, հոգին մաշվել, ձենը փորն ընկնել, ձեռ(ք)ը հասնել, ձեռքիցը գալ»** (ՎՀ): **«Զարմանք, անսպասելիության»** հնարները կարելի է գործածել դասի կշռադաստման փուլում, երբ սովորողները համեմատում են 18-19-րդ դարերում գրված ստեղծագործությունների լեզվական իրողությունները և տեսնում նմանություններ: Այսպես, էլեկտրոնային գրատախտակի կամ լուսապաստառի միջոցով ներկայացնում ենք բնագրային հատվածներ, նախադասություններ.

**«Մոված փոր, ծեր մարդ, դատարկ գլուխ ու էնպես խնկահոտ, մեղրամոմ, ի՞նչ լազաթ կտա, իմացողը թող իմանա»:** **«Աչքս խավարի, լեզուս կարկամի, որ ձեզ չտայի էդ դառը խաբար»:** **«Գնանք Երևանու բերդը, օրը մթնում ա, խավարը բռնում»:** **«Բանն են չի, որ մարդ, ծեզը տալիս, գնա ժամը, մեկ-երկու ծունդը դնի»:**

Հնարավորություն ենք տալիս սովորողներին վերլուծել իրենց հասկանալի իրողությունները: Հնարավոր տարբերակներ են. սովորողները ուշադրություն կդարձնեն օժանդակ բայի «ա»-ի գործածությանը, ժողովրդախոսակցական լեզվում տարածված հնչյունափոխություններին, ք-ի անկմանը՝ «ռսի, ձենը, էնպես, փետացած, ձեռդ, ձեռիցը», դարձվածքներին՝ «ախ ու վախ քաշել, ձենը փորն ընկնել, հացը կտրել» և այլն, ժողովրդախոսակցական ասույթներ՝ «Հորն ողորմի», փոխառություններ՝ «դոշ, դոչաղ»: Վերլուծական աշխատանքից հետո սովորողներին եզրակացություններ անելու հնարավորություն է տրվում: Երբեմն սովորողները համեմատում են 19-րդ և 21-րդ դարերի խոսակցական հայերենը: Մեր օրերում էլ խոսակցական հայերենը բավական «հեռվացել» է գրական հայերենից: Համեմատում են՝ բերելով

օրինակներ հենց խոսակցական հայերենից: Այս կերպ սովորողների մեջ զարգանում է վերլուծական-քննական մտածողություն:

### **Եզրակացություններ**

Այսպիսով, անդրադառնալով բարբառային իրողությունների ուսուցմանը հիմնական և ավագ դպրոցում, կարող ենք նշել, որ՝

1. հիմնական դպրոցում նախընտրելի են գործածել մեթոդական հնարներից գուշակություն, անսպասելիություն, խորհրդավորություն և այլն, որոնք հետաքրքրություն կառաջացնեն սովորողների մեջ:

2. Ավագ դպրոցում ավելի գիտելիքահեն մեթոդներ ենք առաջարկում, ինչպես դասախոսություն, ինքնուրույն հետազոտություններ, խմբային աշխատանքներ:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Աղայան Է. (1987), Լեզվաբանության հիմունքներ, Երևան:
2. Սիմոնյան Ն. (1979), Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, էջ 188-249:
3. Հանանյան Գ. (2016), Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, «Բանբեր Երևանի համալսարանի», N 1(19), էջ 15-25:
4. Ղարիբյան Ա. (1953), Հայ բարբառագիտություն, Երևան:
5. Զահուկյան Գ. (1972), Հայ բարբառագիտության ներածություն, Երևան:
6. Մուրադյան Հ. (1982), Լեզվաբանական աշխարհագրությունը և նրա խնդիրները, Հայ բարբառագիտական ատլաս, Երևան:
7. Եզեկյան Լ., Սաքապետոյան Ռ., Սարգսյան Ա. (2015), Հայոց լեզու, Երևան:
8. Эко У. (2005), Роль читателя, Москва.
9. Выготский Л. (2023), Мышление и речь, Москва.
10. <https://escs.am/files/files/2021-05-06/1d10dc19d7adb902d7a2ee54481cbc8.pdf/9/28/2023, 2/42:>
11. Ուսուցման մեթոդներ և հնարներ,  
/Users/Pc1324/Desktop/b4cdd2f6e89b2343f17b897bc9cbf23e.pdf24/04/2023, 13/30:



## REFERENCES

1. Aghayan E. (1987), *Lezvabanowt'yan himownqner /Fundamentals of Linguistics*, Yerevan,
2. Simonyan N. (1979), *Hay barbar'neri hndevropakan hnabanowt'yownnery'*, *Hayoc lezvi hamematakan qerakanowt'yan harcer*, /Indo-European Archeology of Armenian Dialects, Questions of Comparative Grammar of the Armenian Language/, Yerevan, pp. 188-249.
3. Hananyan G. (2016), *Hay barbar'neri bazmahatkanish dasakargowmy'* /Multifunctional classification of Armenian dialects/, "Banber of Yerevan university", N 1(19), pp. 15-25.
4. Gharibyan A. (1953), *Hay barbar'agitowt'yown /Armenian dialectology/*, Yerevan.
5. G. Jahukyan (1972), *Hay barbar'agitowt'yan nerac'owt'yown / Introduction of Armenian dialectology*, Yerevan,.
6. Muradyan H. (1982), *Lezvabanakan ashxarhagrowt'yowny' & nra xndirneri'*, *Hay barbar'agitakan atlas /linguistic geography and its problems*, *Atlas of Armenian dialectology/*, Yerevan.
7. Yezekyan L. (2015), R. Saqapetoyan, A. Sargsyan, *Hayoc lezow / Armenian language/*, Yerevan.
8. Eco U. (1979), *Rol' chitatelya /The role of the reader/*, Bloomington, University of Indiana press, Saints-Petersburg.
9. Vygotsky L. (2023), *Myshleniye i rech' / Thinking and speech/*, Moscow.
10. <https://escs.am/files/files/2021-05-06/1d10dc19d7adbb902d7a2ee54481cbc8.pdf/9/28/2023, 2/42:>
11. Learning methods and techniques  
/Users/Pc1324/Desktop/b4cdd2f6e89b2343f17b897bc9cbf23e.pdf24/04/2023, 13/30

Ашхен Юзбашян  
Шогер Вердян

**Преподавание некоторых диалектических реалии в школах**

### Заклучение

**Ключевые слова и выражения:** диалект, тайна-отгадка-удивление, неожиданность, литературный армянский язык, сленг, живой язык, многогранный принцип диалектной классификации, фольклор.

Существует множество диалектов армянского языка, довольно красивых и богатых, они являются уникальными проявлениями «живого языка». В этой статье мы рассмотрели преподавание диалектов как в средних,

так и в старших классах. Предлагаем некоторые методические приемы и методы преподавания диалектных фактов. В государственной программе армянского языка средних классов количество часов, отведенных на преподавание диалектов, не отведено, однако, учитывая тот факт, что в государственную программу предмета «Литература» начальной школы включены художественные произведения, написанные на разных диалектах, то, естественно, мы должны обратиться к преподаванию языковых реалий этих произведений. Учитывая возрастные особенности, мы сочли целесообразным организовать преподавание диалектных реалий в начальных классах, используя приемы тайны, 2. угадывания, 3. удивления, неожиданные уловки, которые дают учащимся возможность вызвать интерес к преподаваемому материалу. В старших классах мы больше внимания уделяем реалиям, основанным на знаниях, ссылаясь на литературные концепции армянского диалекта и сленга. Предлагаем материалы для самостоятельного исследования, изготовления плакатов, съемок видеороликов.

Таким образом, говоря о преподавании диалектных реалий в начальных и старших классах, можно отметить, что:

1. В начальных классах предпочтительнее использовать отгадку, неожиданность, загадку и другие подобные приемы, которые вызовут интерес у учащихся.

2. В старших классах мы предлагаем более углубленные методики, такие как лекции, самостоятельные исследования и групповая работа.

Эти реалии являются важным фундаментом, который готовит старшеклассников к получению высшего образования.

**Ashkhen Yuzbashyan  
Shoger Verdyan**

### **Some dialectical realities teaching at school**

#### **Conclusion**

**Key words and expressions:** Dialect, mystery-guessing-surprise, unexpectedness, literary Armenian, slang, alive language, multi-characteristic principle of dialect classification, collection of words.

There are many types of dialects in Armenian language, enough beautiful and rich, unique manifestations of “alive language”. In this article we refer for teaching dialects in primary school and high school either. For teaching dialectal realities we offer some methodical tricks also methods. There is no allotted time in the program of state Armenian language at middle school for teaching dialects, but

considering the fact that in the state program of “Literature” there are many included works written with different dialects, that means we have to refer for linguistic realities of its teaching. Considering age characteristics in the primary school, we found it appropriate to organize the teaching of dialectal realities using the techniques of 1. Mystery, 2. Guessing, 3. Surprise, unexpectedness \, which give students the opportunity to arouse interest in the taught material. In high school, we pay more attention to knowledge-based realities, referring to literary Armenian-dialect-slang concepts. We offer materials for independent research, making posters, filming videos.

Thus, referring to the teaching of dialect realities in primary and high school, we can note that:

1. In the primary school, it is preferable to use guesswork, surprise, mystery and other such tricks that will arouse interest among students.
2. In high school, we offer more knowledge-based methods, such as lectures, independent research and group work.

These realities are an important foundation that prepares high school students for higher education.

**Աշխեն Յուզբաշյան**- բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: Խ. Արովյանի անվան հայկական պետական համալսարան, հայոց լեզվի և նրա դասականության մեթոդիկայի ամբիոն: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի պատմություն, ընդհանուր լեզվաբանություն, բարբառագիտություն և նրանց դասականության հարցերը: Հեղինակ է 4 մենագրություն և 30 գիտամեթոդական հոդվածի: [yuzbashyan.ash@mail.ru](mailto:yuzbashyan.ash@mail.ru)

**Ашхен Юзбашян**- доцент кафедры армянского языка и методики ее преподавания Государственного университета имени Хачатура Абовяна. Научные интересы: история армянского языка, общее языкознание, диалектология и вопросы их преподавания. автор 4 монографий и 30 научно-методических статей. [yuzbashyan.ash@mail.ru](mailto:yuzbashyan.ash@mail.ru)

**Ashkhen Yuzbashyan**- Associate Professor of the Department of Armenian Language and its Teaching Methodology at ASPU named after Khachatur Abovyan.

Scientific interests: history of the Armenian language, general linguistics, dialectology and the issues of their teaching. She is an author 4 monographs and 30 scientific methodical articles. [yuzbashyan.ash@mail.ru](mailto:yuzbashyan.ash@mail.ru)

**Շոդեր Վերդյան**- Հ. 119 ավագ դպրոցի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի հարցեր: Հեղինակել է 2 գիտամեթոդական հոդված: [Shoqher.verdyan@gmail.com](mailto:Shoqher.verdyan@gmail.com)

**Шогер Вердян** – директор средней школы Н.119. Научные интересы: вопросы армянского языка и методики его преподавания. Автор 2 научно-методических статей. [Shoqher.verdyan@gmail.com](mailto:Shoqher.verdyan@gmail.com)

**Shoqher Verdyan**- 119 high school director. Scientific interests: issues of the Armenian language and its teaching methodology. She is an author 2 scientific methodical articles. [Shoqher.verdyan@gmail.com](mailto:Shoqher.verdyan@gmail.com)

*Խմբագրություն է ուղարկվել 14.10.2023թ.  
Հանձնարարվել է գրախոսության 22.10.2023թ.  
Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ.*